Գերարգելւոյ և գերիմաստի տեառն տեառն
Մխիթարայ Աբբայի

. . . արդ սուրբ Օնոփրիոսի թաղէն չուեալ, եկի առ գոլէճն փոնթէսխսթու՝ հան֊դերձ տէր Օհաննիւն՝, և փոքրաւորիւ միով, այսօր Է օր է, որ բնակիմ աստ ընդ հասա֊րակութեան։ Գիտեմ որ այժմ գտանիս ներ զբաղմանց շինուածոյն, տացէ տէր զերջանիկ վերջաւորումն, սակայն շնորհ առնես, և միջնորդիւ միով տեղեկանայցես թէ յոյնք՝ նոր ձեռնադրեալ եպիսկոպոսացն զորպիսի վկայականս տան, ի վերայ թղտի՞ գրեն, թէ մագաղաթի. կնիքն ի վերայ նորա՞ է իբրև զմերն, թէ ի վերայ դուռշունի հանգոյն լաթինացւոց. Տէկիրմէն ատասին, որ կոչի միլոյ, լոկ եպիսկոպոսարա՞ն է՝ թէ մէթրօ֊փօլիթան է։ փութով տեղեկացեալ զիսկն՝ գրեսցես ինձ, զի ներ խոստակցութեան վիճա֊բանողաց միոյն՝ խնդրեաց յինէն խորհրդաբար իմանալ զվերոգրեալն և յոյժ թախան֊ձեաց, որ հարկաւորեցայ գրել, զայս առաւել կարես իմանալ ի ուղղափառ եպիսկոպոսէ նոցին՝ որ ի վանքն մեր պատարագեաց. կամ ի այլոց՝ որպէս և հաճիս, վասն զի են և գոն բազումք ի տեղւոջդ՝ որք գիտեն յոյժ բարեպէս ։ . . .

Գերարգելութեան քում նուաստ ծառայ

1736 ի գոլէճն
փոնթէսխսթու
Մայիսի 18

Յոհան Եպս. Սեպաստիոյ

ԼԲ.

Կարդալով հետևեալը՝ միակ խորհրդածութիւննիս պիտի ըլլայ՝ թէ անցեալը իրական ապացոյց մ՚է որ կը յորդորէ չհաւատալ բնաւ ամուլ խոստումներու՝ մինչև անոնց իրականութիւնը։

Վերապատուելագունեղի տեառն տեառն Աբբայ Հօրն մերոյ
Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի
և այլոց մերայնոց բնաւից

1726 Յուլիսի 1. ի Կոստանդնուպոլիս

. . . Մեծ վրէժխնդրութիւն գոյ աստ ի Ստամպօլ Էֆէնտիսուն վասն զգեստուց և մուճակաց հայոց և յունաց և կանանց, զի բազմաց կանանց հրապարակաբար ի ճա֊նապարհի զթարփուշն հատին, և զօձիս վերարկուացն, զդեղին մուճակ հագանիլն արգի֊լեցին, թէև իցէին ի ներքոյ դրօշակի այլոց ազգաց. և այս ամենայն վարկանի պատ֊ճառեցեալ գոլ ի յաւերմանէ զօրաց տաճկաց ի հայոց, թէպէտ ոչ գոյ ձայն և խօսք զայսմանէ յայտնի։ Նաև արար ի վերայ ձիանց բեռնակրաց զսլագունս ի վերայ սէմէրից, զի մի նստիցին յետոյ տեարք ի վերայ նոցին, մինչ թափիցեն զբեռինս, այլ հանգիցին, և տեարք հետիոտս գնայցեն։ Նաև օր աւուր նոր ինչ արտակայանայ, և գոյ ձայն թէ կանայք հայոց և յունաց զսեաւ մազէ փէրէճէ զգեցուցանելոց են, Աստուած վերջ բարի տայցէ։ Ի յանատօլու մեծ խառնակութիւն և աւերումն գոյ ի բազում տեղիս, թէ պատ֊ճառաւ քննութեան ուղղափառութեան և թէ պատճառաւ զօրաց անօրինաց անցաւորաց։...

Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի